Երուսաղէմ մնացած և ծառայած է իրր միաբան. նոյնութեամբ մէջ կը բերենք իր տողերը. «... Մարգարն Ս. սրկ. էր և լուսարար Ս. Յակոբայ և այլ բազում եկեղեցեաց. մանաւանդ Ս. Աստուածածնի գերեզմանին. որ զսորա գովութիւնն ո՞վ կարէ գրով հարկանել. թէ հեզութիւնն, թէ զանտանելի չարչարանացն համբերութիւնն, որ ի Դրիգոր եպիսկոպոսի (Պարոնտէր) ձեռացն կու կրէր. թէ՛ միամտութեամբ և անտրտունջ զամենայն եկեղեցեաց ջահերն լուանայր և լուցանէր և խնկարկէր. ոչ թէ եկեղեցիք միայն այլ ամենեցուն՝ թէ վարդապետաց թէ աբեղացն, թէ զԴրիգոր եպիսկոպոսին, մինչ յարտաքսս կարեաց վճարելոյ տեղացն այլ ջահերն լուցանէր. թէ զանհանգիստ արթնութիւնն. որ շատն յոտից վերայ զքունն կու անցուցանէր, որ մարմինն դեղին խնկի նման էր եղել. որ թվ. ՌՁ (=1631) առ Աստուած վերափոխէր բարիոք մահուամբ. որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի։ Այլ էր սա ի մեր երկրէն Կամախոյ. ի մեծ գիւղանէն Գոմերոյն էր»։

Միւնոյն վարդապետը իր ինքնագիր Աստուածաշունչին Հռոմի գիրքէն վերջ գրած յիշատակարանին մէջ Մարգար սրկ.ի նկատմամբ կուտայ սա տեղեկութիւնն ալ. «... կրկին և կրկին զյիշելոյ արժանին՝ զՍեպուհուլեառնացի Պարոն միակեցն և զիւր հլու աշակերտն Մարգարն, որ զթուղթս շնորհեաց գրոցս. յիշատակ նորա յաւիտեան եղիցի։»

ՄԱՐԳԱՐ ՎՐԴ. ՆԱԽԻՋԵՒԱՆՑԻ. — Մբ. Ս. Էջմիածնի, իր ուխտաւորութեան ժամանակ Ս. Յակոբի վանքին կը նուիրէ ՌՃՂԹ (=1750) թուին ընդօրինակած Առ որս ձեռագիրը, ինչպէս նաև Ստեփանոս Լեհացիին թարգմանած Դիոնեսիոս Արիսպագացւոյն գիրքը, որուն ընդօրինակութիւնը կատարած էր Ս. Էջմիածնի մէջ, 1752ին կը նուիրէ Ս. Յակոբի Մատենադարանին և կը գրէ հետեւեալ յուշագրութիւնը. «... արդ յորժամ եկի ի սուրբ և ի գերահռչակ փրկչական աթոռս յերուսաղէմ առ ի յերկրպագութիւն գերեզմանին Քրիստոսի և այլ տնօրինական տեղիսն, յիշատակ ետու զայս գրչեայ գիրքս՝ որ կոչի Դիոնէսիոս որ իմոյ անարժան ձեռօքս գրեցի ի սուրբ գահն Էջմիածին բազում նեղութեամբ և չարչարանօք. վասն որոյ խնդրեմ ի սիրելի հարցդ և ցանկալի եղբարցդ. արդ եղև յիշատակագիրքս Դիոնեսիոսի ի թվականութեանս ՌՄԱ (= 1752) թվին.